

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ ՍԵԶ  
ՅԱՐԱՏԵՌՈՒԹԻՒՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ  
ՕՐԻՆԱԿՈՎ  
**ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՄԱԿԻՆ**  
12.1-7

Ուրեմն մենք ալ, որ այսքան բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք, վանենք ամէն խոչընդոտ եւ մէկ կողմ ձգենք մեղքը, որ մեզ դիւրաւ կը պաշարէ, եւ համբերատառութեամբ պայքարինք մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ։ Մեր աչքերը յարենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով թէ ի՞նչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեց ամօրը, յանձն առաւ խաչի վրայ մենակի եւ Սատուծոյ արռողին աշ կողմը նստաւ։

Որպէսզի երբեք չյուսալքուիք եւ չտկարանաք, մտաբերեցէ՞ք, թէ Յիսուս ինչպիսի համբերութեամբ կրեց մեղաւորներու հակառակութիւնները։ Դուք տակաւին ձեր արիւնը թափելու չափ դիմադրութիւն ցոյց չտուիք մեղքի դէմ պայքարին մէց։

### ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՄԱԿԻՆ 12.5-9

... Ուստի համբերութեամբ ընդունեցէ՞ք Սատուծոյ խրատը գիտնալով, որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ։ Կա՞յ զաւակ մը, որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ։ Ընդհակառակը, երէ Սատուած ձեզ յանդիմանէ, ինչպէս կ'ընէ իր բոլոր որդիններուն, կը նշանակէ, թէ իր զաւակները չեք եւ խորթէք իրեն։ Մեր մարմնաւոր հայրերը, երբ մեզ յանդիմանեն, կը դադրի՞նք զիրենի յարգելէ։ Ո՞չ։ Ուրեմն, որքան աւելի եւս հնագանդ պէտք է ըլլան հոգիններու հօր, որպէսզի կեանք ունենան։

## ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

### ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՈՐԴԱՐԱՆ

\*\*\*\*\*

Թեմական կեանքէն ներս Առաջնորդարանը այն կառոյցն է, որ կը գտնուի առաջնորդին աշխատասենեակը պաշտօնական հիւրերը ընդունելու դահլիճը, Ազգ. Վարչութեան ժողովասենեակները, եթէ հնարաւորութիւն ունի, խորհուրդներու ժողովասենեակները, քարտուղարութեան գրասենեակը, որ միանգամայն կը պահուին ժողովներու ատենագրութեանց տետրակները, թղթակցութեանց պատճենները, հաշուապահական տոմարները, թեմի եկեղեցիներու խորհրդակատարութեանց տոմարները, այլ խօսքով՝ թեմի բոլոր արխիմետրը։

Բայց Առաջնորդարան հասկացողութիւնը լոկ ժողովատեղի կամ արխիտառուն չէ, այլ՝ թեմական կեանքին կորիզն է ան, ընդհանուր վերահսկողը՝ թեմին կրթական բոլոր ծրագիրներուն, շրջանի հայ կեանքը իր բոլոր երեսներով առողջ պահող, ժողովուրդին բացուող, ժողովուրդին ծառայութեան կոչուած հաստատութիւնն է ան, որ իր առաքելութեամբ եւ ներհուն աշխատանքով պէտք է դառնայ ուղղութիւն տուող փարոս հայ կեանքէն ներս։

Հոգեւոր կեանքի ծաղկման, եկեղեցիներու պայծառութեան, ազգային դիմագիծի պահպանման մղիչ սատարողը պէտք է ըլլայ Ազգային Առաջնորդարանը։

ՃՐԱԳ ԸԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -

Bouj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 -facebook-ի էջ Jerak ՃՐԱԳ ՔԵՐ

ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգս Ա. Քենջ. Սարգսիսեան

## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՅՈՒ ԽՈՍՔ Ի Խ ՈՅԵՐՈՒՄ ՃՐԱԳ Է ՈՒ Խ ՇԱԿԻՆԵՐՈՒՄ ԼՂՅԱՆ  
(Ա. 119.105)

ԺԶ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 16 ԿՊՐԻԼ 2023

ԹԻՒ 16

### ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱՑԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՉՈՒՄՆԵՐԸ

Գրձ. 5.34-6.7: Յկ. 3.1-12: Յհ. 1.1-17

#### ՆՈՐ ԿԻՐԱԿԻ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)

##### Աւետարան ըստ Յովհաննէսի 1.1-17

Աշխարհի ստեղծագործութեան առաջ գոյութիւն ունէր Բանը։ Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր։ Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր։ Անով էր, որ Աստուած ամէն ինչ ստեղծեց։ Առանց անոր ո՞չ մէկ բան ստեղծեց։ Կեանքը անով սկիզբ առաւ։ Եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայիի բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն։

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ դրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ անոր միջոցաւ հաւատա։ Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը։ Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը։ Աշխարհի մէջ էր անիկա, աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ։ Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին։ Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու։ ո՞չ արեան ճամբով եւ ո՞չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով։

Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը։ Փառքը Սիածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն։

Յովհաննէս անոր մասին վկայեց, յայտարարելով.- Ասիկա է ան՝ որուն մասին կ'ըսէի. «Ան որ ինձմէ առաջ գոյութիւն ունէր»։

Անոր լիառատ շնորհքէն է, որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ։

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ՆՈՐ ԿԻՐԱՎԿԻ ԿԱՄ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)

Ս. Զատիկի յաջորդող Կիրակին կը կոչուի նոր Կիրակի կամ Կրկնազատիկ: Յիսուս Յարութենեն յետոյ յանախակի առիթներով երեցաւ իր աշակերտներուն: Յարութեան ութերորդ օրը, Յիսուս դարձեալ երեցաւ անոնց: Այնտեղ էր նաև Թովմաս առաքեալը, որ Յարութեան օրը չէր տեսած Տէրը եւ ըսեր էր. «Մինչեւ որ գամերուն հետքերը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամերուն տեղերը եւ ձեռքս չդպջնեմ Անոր կողին, չեմ հաւատար» (Յովհ. 20.25): Յիսուս կը հրաւիրէ Թովմասը, որ իր ձեռքերը կողին մէջ խրէ եւ շօշափէ: Բայց ան միայն կը բացագանչէ՝ «Տէ՛րս եւ Ա'ստուածս»:

Յիսուս կ'ըսէ անոր. «Զիս տեսնելուդ համար հաւատացիր, չէ՞: Երանի՛ անոնց, որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան»: Եկեղեցին, այս յիշատակը կը տօնէ որպէս նաւակատիք Զատիկի: Յոյները նոր Կիրակին կը կոչեն Թովման Կիրակին:

Կիրակի կամ Կիրակէ յունարէն բառ է, որ կը նշանակէ Տէրունի օր: Ակզբանական շրջաններուն տարածուած չէր Կիրակի բառը, այլ կը գործածուէր Միաշաբաթ անունը, որպէս շաբթուան առաջին օրը, երբ Քրիստոս յարութիւն առաւ մեռեներէն:

Հետագային է, որ Միաշաբաթի փոխարէն տարածուեցաւ յունարէն Կիրակի բառը:

Կիրակի օրուան համար Առաքելական 34 կանոններու երկրորդը հետեւեալ հրահանգը կու տայ. «Բոլոր Կիրակի օրերը տօն կ'ըլլայ եւ պատարագ կը կատարուի, կը կարդացուին մարգարեական Գիրքն եւ առաքելական Նամակներ, եւ ապա կը կարդացուի Ս. Աւետարան»:

Քրիստոնեաներուն համար Կիրակի օրը հանգստեան օր է: Սակայն սիրելի ընթերցող, հանգիստը տունին մէջ ամբողջ օրը հանգիստ ընել չէ, ո՞չ ալ մինչեւ ուշ ժամեր քնանալ: Ֆիզիքական հանգիստէն աւելի կարեւորը՝ հոգիի հանգստութիւնն է: Եւ այդ հանգստութիւնը կը զգանք պատարագի մասնակցութեամբ, աղօթքով: Կիրակին չանցընենք քնանալով կամ դատարկ գործերով, այլ աղօթքով:

### ՆՈՐ ԿԻՐԱՎԿԻ

**Զատկուան յաջորդող Կիրակին է:**  
Յայտնի է, որ Քրիստոսի յարութեամբ միաշաբաթ օրը նուիրագործքեցաւ եւ դարձաւ Կիրակի, ուստի անոր յաջորդող միաշաբաթը կոչուեցաւ Նոր Կիրակի կրկնազատիկ՝ Կրկին Զատիկ: Նոր Կիրակին կը խորհրդանշէ Քրիստոսի եկեղեցւոյ հաստատման եւ ծաւալման սկիզբը:

\*\*\*\*\*

### Է՞նչ կը նշանակէ Մայրենի եկեղեցի:

Հայ Եկեղեցին հոգեւոր մայրն է իր ժողովուրդին եւ ժողովուրդն ալ հոգեւոր զաւակն է անոր: Որովհետեւ ժողովուրդը մկրտութեամբ հոգեւորապէս կը ծնի անոր ծոցէն, անկէ կ'առնէ իր հոգեւոր սնունդը եւ կը պաշտպանուի անոր հովանին տակ ընդդէմ իր հաւատին, բարոյականին եւ թշնամիներուն: Այս պատճառով կ'ըսուի ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻ:

ՀՈՎԵՒՈՐ  
ՊԱՏ ԳԱՍ

### «Գտնել» զԱստուած

Կան մարդիկ, որոնք կը կարծեն, թէ Աստուած «կորսուած» է իրենց կեանիին մէջ եւ անկարելի է զանիկա գտնել: Ոմանք ալ կը խորիին, որ Աստուած անսահմանուն հեռու է մարդոցմէ, հետեւարար, զո՞ւր է զանիկա օգնութեան կանչելու ամէն շանք: Եսայի մարգարէն կու գայ պատասխանելու այս երկու խումբի մարդոց ըսելով. «Տէ՛րը փնտողեցէք, քանի որ անիկա կը գտնուի. զանիկա կանչեցէք, քանի որ անիկա մօտ է» (Ես. 55.6): ԶԱստուած փնտող մարդուն համար՝ գտանելի է Ան: ԶԱստուած կանչողին համար՝ մօտ է Ան: Եթէ կ'ուզենի «գտնել» զԱստուած, պէտք է զանիկա փնտոնին ինչպէս մայր մը կը փնտուի իր կորսուած զաւակը, ինչպէս Ս. Կոյսը փնտոնց Յիսուսը:

### ՄԻԱՍՆԱՔԱՐ ԱՂՋԹԵՆՔ

Տէ՛ր, իշեցն'իր, Սուրբ Հոգիի շնորհքները իմ վրաս, որ միայնակ եմ պատերազմի մէջ՝ առանց օգնականի: Սրբէ՛, Տէ՛ր, հոգիիս տաճարը եւ ինձի հե՛տ եղիր երեկոները: Բա՛ց հոգիիս աչքերը եւ լուսաւորէ՛ միտքս ու խորհուրդներս: Զօրութի՛ն տո՞ւր ինձի, Տէ՛ր իմ Յիսուս, եւ ընդունէ՛ օրինաբանութիւնս: Արթնցն'իր զիս զիշերուան խոր քունէն՝ զոհանալու եւ օրինելու քեզ, որ քանի իմ մեղքերս: Սուզ եւ արտասուր շնորհէ՛ ինձի՝ լալու, սգալու եւ անդադար աղօթելու քու առջեւդ:

Եփրեմ Ասորի

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ Կ'ՈՒՁԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ  
ՊԱՇՏՊԱՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՆՏՈԵՍ  
ԿԱՐԴԱՌ Սաղմոս 5  
\*\*\*\*\*

Ով ՏԷՌ, լսէ ինչ որ կ'ըսեմ, նկատի՛ առ հեծեծանքներս: Մտիկ ըրէ աղօթքս, ով իմ թագաւորս եւ Աստածս, կ'աղաշեն քեզի: Ով ՏԷՌ, առառ կանուխէն լսէ կանչ եւ սպասեմ պատասխանիդ:

Դուն անօրէնութիւն չես սիրեր, ով Աստուած: Դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ, հպարտները չես հանդուրժեր, եւ կ'ատես անօրէնութիւն գործողները, սուտ խօսողները կորուսի կը մատնես, արինահեղ ու նենգաւոր մարդէն կը զգուիս, ով ՏէՌ: Բայց ես քու անչափ սիրոյդ ապաւինած՝ քու Տունդ պիտի մտնեմ, երկիղածութեամբ դէպի սուրբ տաճարդ պիտի դառնամ ու երկրպագեմ:

ՏԷՌ, արդարութեամբ առաջնորդէ զիս, քու ճամբար հարթէ իմ դիմացս, որպէս դառնամուտ թշնամիներս տեսնեն, որովհետեւ անոնց բերանը ստութեամբ լի է, եւ անոնց սիրտը՝ չարութեամբ լեցուն: Բացաւած գերեզման է կոկորդն անոնց եւ նենգութեան գործիք դարձեր են լեզուներն անոնց:

Ով Աստուած, անոնց յանցանքին պատիքը տուր, իրենց խորհուրդները քող կործանեն զիրենք, որովհետեւ քեզի դէմ ըմբռստացան:

**ԱՄԷՆ ՕՐ ԲԱՆԱՆՔ ՄԵՐ  
ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԸ ԵՒ ԱՆՈՐ  
ՄԵԶԷՆ ՄԵՐ ԱՂՋԹՔԸ ԿԱՏԱՐԵՆՔ  
Ա.Ռ ԱՍՏՈՒԾԸ**